ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն.

1) Հայ ֆիզիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ Միշիկ Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարյան փողոցի հ.31 շենքի պատին փակցնելու վերաբերյալ,

2) Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գարեգին Նժդեհի փողոցի հ.1 շենքի պատին փակցնելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ ֆիզիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ **Միշիկ Ղազարյանը** ծնվել է 1948թ. փետրվարի 28-ին Հրազդանում:

Հաճախել է Երևանի Շևչենկոյի անվան № 42 դպրոցը և արդեն միջին դասարաններում աչքի է ընկել ֆիզիկայի և մաթեմատիկայի նկատմամբ իր հակումներով: 1970 թվականին ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական համալսարանը, օպտիկա և սպեկտրոսկոպիա մասնագիտությամբ, իսկ հետո կրթությունը շարունակել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Լեբեդևի անվան Ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ այդ տարիներին աշխատում էին հինգ Նոբելյան մրցանակակիրներ: Ասպիրանտուրա ընդունվելուց անմիջապես հետո Ղազարյանը նույն ինստիտուտում աշխատելու առաջարկ է ստացել, որը մեծ պատիվ էր երիտասարդ գիտնականի համար: Նա սկսել է աշխատել ֆիզմաթ գիտությունների թեկնածու Պետրաշի գիտական ղեկավարության ներքո՝ աշխատանքներ իրականացնելով թեկնածուական ատենախոսության ուղղությամբ, որն էլ հաջողությամբ պաշտպանել է 1975 թվականին՝ «Լազերների իմպուլսները մետաղների գոլորշու վրա» թեմայով: Միշիկ Ղազարյանը խորամուխ է եղել լազերային միկրոսկոպիայի, միկրոմասնիկների լազերային արագացման, նանոտեխնոլոգիայի և կենսաֆիզիկայի ոլորտում: Նա առաջիններից մեկն է եղել, ով հետազոտել է լազերները մետաղի գոլորշիների հիման վրա: 1989 թվականին երկարատև գիտական աշխատանքից հետո նա պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը «Էլեկտրոնիկա, այդ թվում քվանտային էլեկտրոնիկա» թեմայով: 2003 թվականին նրան շնորհվել է լազերային ֆիզիկայի պրոֆեսորի կոչում: 1980 թվականին նա արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի՝ գիտության և տեխնոլոգիայի ոլորտում ներդրում ունենալու համար: 2006 թվականին իր կատարած աշխատանքների համար Պրոխորովի անվան ինժեներական գիտությունների ակադեմիան Միշիկ Ղազարյանին պարգևատրել է Սեմյոնովի անվան մեդալով, իսկ 2007 թվականին նույն հաստատությունը

պարգևատրել է նրան արդեն Ալեքսանդր Պրոխորովի անվան մեդալով: Միշիկ Ղազարյանը աշխատել է ՌԳԱ Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտում որպես գիտական քարտուղար և առաջատար գիտաշխատող: Նա հեղինակ է մի շարք միջազգային արտոնագրերի, 26 գրքի և ավելի քան 700 գիտական հոդվածների: Հայ ֆիզիկոսների միության անդամ էր: Հաշվի առնելով Միշիկ Ղազարյանի գիտական, մանկավարժական, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ 2008 թվականին նա ընտրվել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Միշիկ Ղազարյանը մահացել է 2020թ. ապրիլի 6-ին Մոսկվայում:

Հայ ֆիզիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ Միշիկ Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարյան փողոցի հ.31 շենքի պատին փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանի կողմից:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Դավթյանը** ծնվել է 1956թ. նոյեմբերի 21-ին Երևանում: 1963-1973 թվականներին սովորել և ավարտել է Երևանի թիվ 24 միջնակարգ դպրոցը: 1975-1977 թվականներին ծառայել է բանակում: 1977թ. ընդունվել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1982 թվականին՝ գերազանցության դիպլոմով: 1982թ. ընդունվել է նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրան: Մինչև 1986 թվականը եղել է հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ ժամանակակից հայոց լեզու մասնագիտությամբ: 1984-1989 թվականներին աշխատել է բուհի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար: 1990թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և անցել աշխատանքի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 1997-2002 թվականներին եղել է բուհի պրոռեկտոր: 2005թ. ստացել է դոցենտի գիտական կոչում՝ լեզվաբանություն մասնագիտությամբ: 2006թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2014թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում՝ լեզվաբանություն մասնագիտությամբ: 2011-2016 թվականներին եղել է ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի

դեկանը: 2016-2019 թվականներին շարունակել է դասախոսական աշխատանքը հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես պրոֆեսոր:

Արժանացել է պետական պարգևների՝ Դրաստամատ Կանայան մեդալ, ՀՀ ԵԿՄ մեդալ, ՀՊՄՀ հոբելյանական մեդալներ:

Հրատարակել է 50-ից ավելի գրքեր և գիտական հոդվածներ, որոնցից 5-ը ՀՀ ԿԳՆ կողմից ճանաչվել են որպես ուսումնաօժանդակ ձեռնարկներ դպրոցների և բուհերի համար:

Յուրի Դավթյանը մահացել է 2019 թվականի մայիսի 14-ին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գարեգին Նժդեհի փողոցի հ.1 շենքի պատին փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Յուրի Դավթյանի կնոջ՝ Սիրանուշ Խլղաթյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

24, Marshal. Baghramian ave., 0019, Yerevan
Tel.: +37410 527081,
Fax: +37410 569281
E-mail: academy@sci.am

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
Հեռ.՝ +37410 527081,
ֆաքս՝ +37410 569281
էլ.փոստ՝ academy@sci.am

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24
Тел.: +37410 527081,
Факс: +37410 569281
Эл.почта: academy@sci.am

№24-03/403

"26" 10 2022թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 30.08.2022թ. հ.21/80545-22 գրության՝ կից ուղարկում եմ պահանջվող փաստաթղթերը:

Կից՝7էջ:

Հարգանքով՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար **Ա. Իշխանյան**

Կատարող՝
Հերմինե Օհանյան
Հեռ.՝ +37410 516085, 1-39

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆ «ԿԵՆՏՐՈՆ-1»
ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

«06» 03 2022թ.

N 03/15 (08-51)

Կատ՝ [illegible]

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Հայրապետյան Արքայի
Հայրապետյան
(անձնական տվյալներ, ծննդյան թվականներ)

առ այն, որ նա բնակվում է (հաշվառված, առանց հաշվառման) «Կենտրոն-1» համատիրության Սարյան փող., 31 շ. 9 բն.

իր խնամքի տակ (այդ տանը) բնակվում են
Հայր՝ Հայրապետյան Արքա Հայրապետի Հայրապետյան (ծնված 06.04.2020թ.)
Մեզ և երկրիս տեսանելի փաստաթղթերը բնակիչն է գտել և վերադարձնում ենք։

Բնակարանի պասպորտը՝

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու Երևանի
քաղաքային դատարան

ԿԱՌՆԻՎԱՐԻՉ Ա.Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ԻՇԽԱՆՅԱՆ

ՍԵՌԸ
Ա

ԱՆՈՒՆԸ
ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
18.05.1960

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ԱԶՈՐԲԵՋԱՆ

ՏՐՎԵԼ Է
29.03.2022

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
29.03.2032

ՈՒԺԻ ԿՈԴԱՄԻՋ
029

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE	COUNTRY CODE	PASSPORT No.
P	ARM	AU0663098

SURNAME(S)
ISHKHANYAN

NAME
ARTUR

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
18 MAY 1960

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
AZERBAIJAN

DATE OF ISSUE
29 MAR 2022

DATE OF EXPIRY
29 MAR 2032

AUTHORITY
029

P<ARMISHKHANYAN<<ARTUR<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AU0663098 8ARM6005188M3203293<<<<<<<<<<<<<<<02

4

ԱՆՁՆԱԳՐԻՐ ՏԱՆԼԻԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԻՆ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR
COUNTRIES UNTIL

29.03.2032

5

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

029

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ԷՍՔԻԶ

Այս տանն ապրել է ականավոր ֆիզիկոս, մետաղի գոլորշիներով աշխատող լազերի ստեղծող, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Միշիկ Հայրապետի Ղազարյանը (1948-2020):

В этом здании жил выдающийся физик, создатель лазера на парах меди, Лауреат Государственной премии СССР, Иностранный член НАН РА, профессор Мишик Айразатович Казарян.

Professor Mishik Kazaryan, the creator of the cooper vapour laser, the USSR State Prize Laurate, Foreign member of the National Academy of Science of the Republic of Armenia, has lived in this house.

Հուշատախտակի չափերը՝ 594x841x70մմ, նյութը՝ մոխրագույն մարմար:

Սարյան 31 շենքի առաջին մուտքի լուսանկարը



Հուշատախտակի տեղադրման վայրը



Միշիկ Ղազարյանը ծնվել է Հայաստանում՝ Ներքին Ախտա գյուղում (այժմ՝ ք. Հրազդան) 1948 թ. փետրվարի 28-ին, բժիշկների՝ Այրազատ Գաբրիելի Ղազարյանի և Սերիկ Հովսեփի Վանունու ընտանիքում: Սովորել է Երևանի Տ.Շևչենկոյի անվան թիվ 42 միջնակարգ դպրոցում:

1964 թ. Մ.Ղազարյանն ընդունվել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի (ՄՖՏԻ) Ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ֆակուլտետ: 1970 թ., ինստիտուտն ավարտելուց հետո, Մ.Ղազարյանն աշխատել է ԽՍՀՄ ԳԱ (ՌԳԱ) Պ.Լեբեդևի անվան ֆիզիկական ինստիտուտում, որտեղ մինչև կյանքի վերջին օրն զբաղվել է քվանտային ֆիզիկայի տարբեր ոլորտների գիտական հետազոտություններով: 1975 թ. Մ.Ղազարյանը դարձել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, 1989 թ.՝ դոկտոր, իսկ 2003 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 2003 թ. Մ.Ղազարյանն ընտրվել է Ա.Պրոխորովի անվան ճարտարագիտական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, իսկ 2008 թ.՝ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Մ.Ղազարյանը ճանաչված մասնագետ է՝ գազային լազերների և ակտիվ օպտիկական համակարգերի ֆիզիկայի ոլորտում: 1980 թ. նրա աշխատանքները լազերների և օպտիկական համակարգերի ֆիզիկայի ոլորտի գիտնականների խմբի հետ արժանացել են ԽՍՀՄ պետական մրցանակի՝ գիտության և տեխնիկայի բնագավառում՝ մետաղների գոլորշու վրա իմպուլսային լազերների և դրանց հիման վրա գործող պայծառության ուժեղացուցիչներով օպտիկական համակարգերի մշակման համար:

Մ.Ղազարյանի հիմնական ուսումնասիրությունները վերաբերում են հզոր կարգավորվող լազերների ստեղծմանը, լազերային բժշկության համակարգերի ու սարքերի մշակմանը, միկրոմասնիկների լազերային արագացման մեխանիզմների, ինչպես նաև՝ լույսի դինամիկ բազմակի ցրման և ջրային լուծույթներում ջրային կոմպլեքսների էլեկտրաինդուկտված դրեյֆի պայմաններում ֆոտոինդուկտված երևույթների ուսումնասիրությանը:

Մ.Ղազարյանը մշակել է մետաղների գոլորշու վրա լազերների գրգռման նոր մեթոդ, ինչպես նաև՝ բարձր արդյունավետությամբ նոր սերնդի լազերներ՝ 1 վտ-ից մինչև 100 վտ՝ նոմինալ ճառագայթման հզորությամբ: Պայծառության ուժեղացուցիչներով ակտիվ օպտիկական համակարգերի հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել դրանց օգտագործման հնարավորությունը ոչ միայն տեսողական դիտարկման, այլև միկրոօբյեկտների մշակման համար: Նրա դիտարկումները կարևոր են հատկապես մետաղական, կիսահաղորդչային և

դիէլեկտրիկ նյութերի լայն տեսականու ճշգրիտ միկրոմշակման համար: Հատկապես Մ.Ղազարյանի ջանքերով այդ արդյունքները ներդրվել են միկրոէլեկտրոնային արտադրություն, և նման սարքավորումների փորձնական խմբաքանակը հաջողությամբ կիրառվել է գործարանային պայմաններում՝ ինտեգրալ միկրոսխեմաների տարրերի պարամետրերը վերահսկելու և կարգավորելու համար:

Եզակի է Մ.Ղազարյանի սպեկտրի տեսանելի շրջանում պղնձի գոլորշու վրա ինքնաատաքացվող ամենապայծառ իմպուլսապարբերական լազերի ստեղծման աշխատանքը: Մետաղների գոլորշու վրա բարձր հզորությամբ գազապարպման լազերներում իրականացվող պլազմային ռեժիմը կոչվում է «3D Ղազարյան էֆեկտ»: Մ.Ղազարյանը մետաղների գոլորշու վրա այժմ Ռուսաստանում արտադրվող հայրենական լազերների առաջին սերնդի գլխավոր նախաձեռնողն է:

Մ.Ղազարյանը եղել է երկարաժամկետ լյումինեսցենտումով կոմպոզիտային նյութերի և նոր նանոնյութերի մշակման գիտական ղեկավարն ու անմիջական մասնակիցը: Նրա գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունների շարքին անհրաժեշտ է դասել հեռուստատեսային պատկերների, այդ թվում՝ խոշոր երկրաչափական չափեսեր ունեցող կրողների ակուստաօպտիկական լազերային համակարգերի ձևավորման ֆիզիկան ու տեխնիկան: Նա հատուկ ուշադրություն է դարձրել օպտիկական պատկերի ձևավորման իմպուլսային եղանակներին՝ օգտագործելով արդյունավետ ակուստաօպտիկական փոխարկիչներ, որոնք ներկայում միակն են՝ արտակարգ իրավիճակներում հնարավոր բնական կամ տեխնածին աղետների մասին բնակչությանը համաժամանակյա ահազանգի համար:

Մ.Ղազարյանը մեծ ներդրում է ունեցել այլընտրանքային էներգետիկայի և էկոլոգիայի զարգացման գործում: Նա առաջիններից է, որ իրականացրել է աշխատանքներ ջրածնի՝ որպես էկոլոգիապես մաքուր, անվտանգ վառելիքի ստացման մեթոդների, ինչպես նաև՝ տարբեր ֆիզիկական մեթոդներով օրգանական միացությունների մշակման ոլորտում: Մ.Ղազարյանը մասնակցել է քիմիական տարբեր միացություններից ջրածնի ստացման նոր մեթոդների մշակմանը: Առանձնահատուկ է ինտենսիվ ուլտրաձայնային կավիտացիայի ազդեցության տակ հեղուկ ֆազային միացություններ ըպլազմայի պարպման վերածելու մեթոդը: Այս աշխատանքների ընթացքում ցույց է տրվել, որ ցածր ջերմաստիճանի պլազման, որն սկզբնավորվում է հեղուկ ֆազային միջավայրում էլեկտրոդների պարպման պահին, ընդունակ է արդյունավետ քայքայել օրգանական միացությունների ջրածին պարունակող մոլեկուլները և ձևավորել գազանման նյութեր, որտեղ ջրածնի մասը 90%-ից ավել է: Էներգաարդյունավետության գնահատականները հաշվարկվել են՝ հաշվի առնելով

ջրածնի և ելանյութերի այրման ջերմությունը: Էլեկտրաէներգիայի ծախսերը ցույց են տվել օգտակար գործողության մոտ 60-70% արդյունավետություն՝ պայմանավորված նախնական խառնուրդի բաղադրությամբ: Այլընտրանքային էներգետիկայի զարգացման գործում Մ.Ղազարյանի մեկ այլ ուշագրավ ներդրում է՝ բարձր լարման իմպուլսապարբերական լիցքաթափման վրա հիմնված էներգաբացթողման սարքերի տեխնոլոգիական և նախագծային պարամետրերի օպտիմալացման և հիմնավորման աշխատանքը՝ պոլիմերային թափոնները՝ ջրածին և արժեքավոր այլ միացություններ վերամշակելու պլազմաքիմիական ռեակտոր ստեղծելու համար: Այս մշակումների հիման վրա. Մ.Ղազարյանն առաջարկել է միջուկային թափոնների մաքրման մեթոդ:

Մ.Ղազարյանն ակտիվորեն մասնակցել է գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի պատրաստմանը: Նրա ղեկավարությամբ տասնյակ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել տեխնոլոգիաների և սարքավորումների մշակման, ինչպես նաև նյութերի և էլեկտրոնային սարքերի ստեղծման ոլորտներում: Նրա սաները մեծ պահանջարկ ունեն և աշխատում են աշխարհի տարբեր ծայրերում, այդ թվում՝ Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չինաստանում և շատ այլ երկրներում:

Մ.Ղազարյանը, ունենալով գիտական և կազմակերպական աշխատանքի հսկայական փորձ, տասնամյակներ շարունակ մասնակցել է միջազգային գիտաժողովների, սիմպոզիումների նախապատրաստմանը և անցկացմանը Ռուսաստանում, Հայաստանում և արտերկրում: Եղել է միջազգային, ռուսական և հայկական գիտական սիմպոզիումների, գիտաժողովների, ժողովների և սեմինարների կազմակերպական և ծրագրային հանձնաժողովների անդամ: Մինչև վերջին օրերը եղել է «Lasersin Engineering», «Այլընտրանքային էներգիա և էկոլոգիա» միջազգային գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ, «Եվրասիական ֆիզիկական ընկերության» խորհրդի անդամ, Հայաստանի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի» անդամ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լյումինեսցենցիայի գիտական խորհրդի գիտական քարտուղար, ՌԳԱ Պ.Լեբեդևի անվան Ֆիզիկական ինստիտուտի ատենախոսական խորհրդի անդամ:

Գիտելիքի և կրթության համընդհանրությունը, զուգորդված փորձարարի և կազմակերպչի փայլուն կարողությունների հետ, առանձնակի աշխատասիրությունը նշանակալի արդյունքների են հանգեցրել: Մ.Ղազարյանը գիտական դպրոցի հիմնադիր է, ISTC-ի և CRDF-ի բազմաթիվ միջազգային նախագծերի ղեկավար: Նա հեղինակ է ավելի քան 700 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 400 հոդվածի՝ գրախոսվող ամսագրերում և

հանրագիտարաններում, 26 գրքի և 9 ժողովածուի՝ տարբեր հրապարակումներում, 25 արտոնագրի և հեղինակային իրավունքի վկայականների:

1980 թ. ԽՍՀՄ պետական մրցանակից բացի, Մ.Ղազարյանի վաստակը գնահատվել է մի շարք պարգևներով՝ ակադեմիկոս Ն.Սեմյոնովի անվան մեդալ (2006թ.), ակադեմիկոս Ա.Պրոխորովի անվան մեդալ (2007 թ.), ակադեմիկոս Ա.Բերգի անվան մեդալ (2013 թ.), Այլընտրանքային էներգիայի և էկոլոգիայի միջազգային ասոցիացիայի Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի շքանշան:

Մ.Ղազարյանը ճանաչված է եղել ոչ միայն Հայաստանում և Ռուսաստանում: Նրա շատ զեկույցներ ու ելույթներ նպաստել են հայաստանյան և ռուսաստանյան գիտնականների նվաճումների հանրայնացմանը: Նա եղել է գիտահանրամատչելի ֆիլմերի գիտական խորհրդատու, որոնցից ամենահայտնին «Շչելկին.ատոմային ռումբի կնքահայր» ֆիլմն է (2019 թ.): Պրոֆեսոր Ղազարյանը սիրել է կերպարվեստը և ընկերակցել է Ռուսաստանի և Հայաստանի շատ նկարիչների հետ:

Չնայած այն հանգամանքին, որ Միշիկ Ղազարյանն իր կյանքի մեծ մասն ապրել է Մոսկվայում, նա չի հեռացել իր արմատներից, միշտապես սիրել ու ապրել է Հայաստանով, գիտական և ստեղծագործական ժամանակը, արձակուրդների զգալի մասն անցկացրել է Հայաստանում: Մ.Ղազարյանը նկատելի ներդրում է ունեցել Հայաստանում ֆիզիկա գիտության պահպանման ու զարգացման գործում, հատկապես՝ դժվարին 1990-ականներին: Առանձնահատուկ արդյունավետ ու սերտ է եղել նրա երկարամյա համագործակցությունը Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի հետ: Երևանի ֆիզիկայի ինստիտուտում Մ.Ղազարյանի ղեկավարությամբ սարքավորվել է լաբորատորիա, որտեղ կատարվել են պղնձի գոլորշու վրա լազերի փորձարարական ուսումնասիրություններ:

Հայ գիտական հանրությունը համարժեքորեն է գնահատել պրոֆեսոր Մ.Ղազարյանի գիտական և հասարակական գործունեությունը՝ 2008 թ. ընտրելով ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ: Չնայած իր զբաղվածությանը՝ Մ.Ղազարյանն առաջնահերթություն է համարել Հայաստանում, այդ թվում՝ ԳԱԱ հովանու ներքո անցկացվող գիտական միջոցառումները:

Մ.Ղազարյանը կյանքից հեռացել է 2020 թ. ապրիլի 6-ին, կարճատև ծանր հիվանդությունից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

24, Marshal. Baghramian ave., 0019,
Yerevan
Tel.: +37410 527081,
Fax: +37410 569281
E-mail: academy@sci.am

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան
պող., 24
Հեռ.՝ +37410 527081,
ֆաքս՝ +37410 569281
էլ.փոստ՝ academy@sci.am

0019. Ереван, пр. Маршала Баграмяна,
24
Тел.: +37410 527081,
Факс: +37410 569281
Эл.почта: academy@sci.am

N24-01/322
"29" 08 2022թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան

Հայցում եմ Ձեր որոշումը Երևան քաղաքի Սարյան 31 հասցեում գտնվող շենքի մուտքի պատին՝ առաջին մուտքից ձախ, դռան վերին շրջանակի բարձրության սահմանում, տեղադրելու ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Միշիկ Հայրազատի Ղազարյանի հուշատախտակը:

Հուշատախտակի վրա նախատեսվում է եռալեզու տեքստ հետևյալ բովանդակությամբ.

հայերեն՝ «Այս տանն ապրել է ականավոր ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Միշիկ Հայրազատի Ղազարյանը (1948-2020)»,

ռուսերեն՝ «В этом здании жил выдающийся физик, иностранный член НАН РА Мишик Казарян (1948-2020)»,

անգլերեն՝ «Outstanding physicist, foreign member of the National Academy of Sciences of Armenia Mishik Ghazaryan (1948-2020) lived in this house»:

Հուշատախտակի նյութը՝ մարմար, չափերը՝ 594x841մմ:

Հուշատախտակի տեղադրումը ֆինանսավորելու է Միշիկ Ղազարյանի ընտանիքը:

Հարգանքով՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար **Ա. Իշխանյան**

Կատարող՝
Հերմինե Օհանյան
Հեռ.՝ +37410 516085, 1-39

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՊԱՐՈՆ
ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Գ.ՆԺԴԵՀԻ 1, ԲՆ 11
ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍԻՐԱՆՈՒՇ ԽԼՂԱԹՅԱՆԻՑ

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Մարության.

Դիմում եմ Ձեզ խնդրանքով և լիահույս եմ, որ չեք մերժի:

Ամուսինս՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Ռուբենի Դավթյանը, մահացել է ս/թ մայիսի 14-ին: Մեր ընտանիքը մեծ ցանկություն ունի Յուրի Դավթյանի հիշատակը վառ պահելու համար հուշատախտակ տեղադրել իր բնակության շենքի մուտքին: Կարծում եմ, որ Յուրի Դավթյանը դրա համար ունի արժանիքներ: Կփորձեմ հակիրճ հիմնավորել:

Յուրի Դավթյանը ծնվել է Երևանում: Դպրոց, բանակ, ուսումնառության, ապա աշխատանքային տարիներ Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում /այսօր՝ համալսարան/: Մինչև կյանքի վերջը աշխատել է այս բուհում, անմնացորդ նվիրվել է իր բուհին, իր աշխատանքին, իր ուսանողներին: Նվիրյալ մասնագետ, նվիրյալ դասախոս, ով հազարավոր ուսանողների սովորեցնում էր ոսկեղենիկ հայերենի նրբություններն ու գաղտնիքները, ում ուսանողներն անվանում էին ՀՀ լավագույն դեկան, Մեծ ուսուցիչ, ամենազրագետ ու ամենայուրօրինակ մանկավարժ, արժանավոր, զտարյուն հայ Մարդ՝ Մեծատառով: Սրանք սոսկ խոսքեր չեն , վերաբերում են մի մարդու, ով ծնողի նման հոգատար և ուշադիր էր իր ուսանողների հանդեպ: Դրա պատասխանն էր ուսանողների համընդհանուր սերն ու ակնածանքը, հարգանքն ու պատկառանքը:

Յուրի Դավթյանը անթերի էր ոչ միայն որպես մանկավարժ-դասախոս, այլև որպես պաշտոնատար անձ: Եղել է բուհի պրոռեկտոր / 1996-2002թթ./, քաղաքագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական ֆակուլտետի դեկան /2011- 2016/: Եղել է բուհի եզակի անկաշառ, բյուրեղյա ազնվության տեր դասախոս ու պաշտոնյա: Ողջ գործունեության ընթացքում, մասնավորապես դեկանության տարիներին, ֆակուլտետում վերացրել է կաշառակերությունը, անարդարությունը, կոռուպցիան: Նվիրվել է անմնացորդ, պահանջել է խստությամբ: Իհարկե, սա երել է նաև հալածանքների պատճառ, որոնցից նա չի ընկրկել:

Որպես ազգի նվիրյալ և հայրենասեր քաղաքացի՝ զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ, հանդիսացել է Նորքի բարձունքում գտնվող Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերակառուցման մասնակից և օժանդակող, ինչպես նաև եկեղեցու 5 Խաչքավորներից

1635/02
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
No 36 5 » 9 07 2019 թ.

մեկը, կազմակերպել է համագործակցություն ուսանողների և զինվորների միջև նամակագրության տեսքով, կազմակերպել է տասնյակից ավելի այցելություններ ՀՀ ՊՆ և ԱՀ ՊԲ զորամասեր, ոստիկանական ակադեմիայում աշխատելու տարիներին դաստիարակչական աշխատանքներ է տարել ապագա ոստիկանների հետ, որի նպատակն էր ապագա զինվորներին ուղղորդել ազնիվ և ճիշտ ծառայության: 2012թ. նոյեմբերի 15-ի հ.1210 հրամանի համաձայն `ՀՀ ՊՆ կողմից պարգևատրվել է ,,Դրաստամատ Կանայան,, գերատեսչական մեդալով /մեդալի համարը՝ 2166/, որով պարգևատրվում են ռազմական ուսուցման բնագավառում աչքի ընկած զինվորականները և ազատամարտիկները: 2013թ. մայիսի 28-ի հ.45 հրամանի համաձայն՝ ՀՀ ԵԿՄ կողմից պարգևատրվել է ,,ԵԿՄ 20 տարի,, հոբելյանական մեդալով: Տարիներ շարունակ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ղեկավարության կողմից պարգևատրվել է շնորհակալագրերով և մեդալներով: Բուհում պրոռեկտորության տարիներին /1996-2002թթ./ օժանդակել է Արցախյան ազատամարտի բազմաթիվ մասնակիցների և նրանց զավակների անվճար ուսուցման կազմակերպմանը:

Ուսանողության համար նա եղել է կուռք, պաշտամունք. ,,սիրելի դասախոս, ով, իրավամբ, միմիայն դասախոս չէր, մի նվիրյալ էր, վեհ ու բարձր ամենքից,, , ,,լուսավոր ու տաղանդավոր մարդ, մեծ լեզվաբան, հոյակապ մարդ,, , ,,ավագ ընկեր, լավ դասախոս, գերազանց դեկան, մեծատառով Մարդ,,:

Ես հավատացած եմ, որ Մանկավարժականում չկա Յուրի Դավթյանի նման ժողովրդականություն, սեր ու պաշտամունք վայելող մեկ այլ դասախոս: Սա չափազանցություն չէ: Իսկ որպես հայոց լեզվի մասնագետ՝ Յուրի Դավթյանն անփոխարինելի էր: Երեք տասնյակից ավելի գրքերն ու բազմաթիվ հոդվածները տասնյակ տարիներ աշակերտների, ուսուցիչների ու դիմորդների սեղանի գիրքն են եղել ու կմնան: Յուրի Դավթյանը գրել է սովորեցնելու, ոչ թե ձևի համար: Դրանցով հայոց լեզուն սովորում են շատ հեշտ ու մատչելի: Յուրի Դավթյանի ձեռնարկները հայոց լեզվի կետադրության, ուղղագրության, փոխակերպումների, գծապատկերների, ուսուցման սկզբունքների և այլ լեզվական թեմաների վերաբերյալ անգնահատելի գրքեր են, որոնցից որոշները ժամանակին կրթության նախարարության կողմից հաստատվել են որպես ուսումնաօժանդակ ձեռնարկներ: Վերոհիշյալ գրքերը հրատարակվել են և շարունակվում են վերահրատարակվել առ այսօր՝ սկսած 1995 թվականից: Լինելով լեզվաբան՝ գրել է գրքեր նաև ճարտասանության ու գրականության վերաբերյալ, կատարել գրական ստեղծագործությունների արտակարգ զարմանալի ու յուրօրինակ վերլուծություններ, որոնք ապշեցնում են իրենց ինքնատիպությամբ ու եզակիությամբ:

Այս ամենով հանդերձ՝ Յուրի Դավթյանը արտակարգ համեստ, բարի, մարդասեր ու հայրենասեր, արժանապատվության բարձր զգացում ունեցող անձնավորություն էր, բացառիկ ազնիվ մարդ, ով անշահախնդիր օգնում էր մարդկանց՝առանց սպասելու նրանց խնդրանքին, ով երբեք չպայքարեց պաշտոնների համար, որոնցից զրկվում էր շատ անարդարացիորեն:

Յուրի Դավթյանի անժամանակ մահը շատ մեծ ցավ ու ափսոսանք պատճառեց ոչ միայն ընտանիքին ու հարազատներին, այլև իրեն ճանաչող հազարավոր ընկերներին, ծանոթներին, կոլեգաներին, ուսանողներին: Ցավակցական նշումներից ուզում եմ առանձնացնել մի քանիսը, որոնք ավելի ամբողջական կդարձնեն Յուրի Դավթյանի կերպարը.

,,Կան մարդիկ, որոնց հետ շփվելիս մոռանում ենք, որ մարդը մահկանացու է: Դրանից է Յուրի Դավթյանի մահվան լուրի՝այսքան անսպասելի լինելը: Կորուստը մեծ է. կորցրել են

առաջին հերթին ուսանողները, որոնց այնքան նվիրումով ու հոգատարությամբ էր վերաբերվում: Դավթյանը Մանկավարժականի այն եզակի դասախոսն է, ով ճիշտ ընտրված մեթոդների ու նյութի համակարգված մատուցման շնորհիվ կարողանում էր հիմնավոր ու կայուն գիտելիք հաղորդել ուսանողին այնպես, որ ընդամենը մի քանի դասի ընթացքում տեսական գիտելիքները դառնում էին գործնական հմտություններ: Նման համակարգվածություն էր պահանջում նաև ուսանողից՝ դասախոսությունները համեմելով կենսափորձով ապացուցված կյանքի դասերով,,:

,,Մեր սիրելի դեկան... Բոլոր ժամանակների անփոխարինելի դասախոս, մեծ անհատ, ուսանողների սերն ու հարգանքը վայելող անձ... Ձեր խորհուրդները ամբողջ կյանքի համար են, իսկ դասերը ամեն օր են կրթում մեզ, անդառնալի կորուստ ունենք այսօր,,:

,,Բանասիրական ֆակուլտետը անփոխարինելի մարդ կորցրեց..:

,,Հայ ազգը կորցրեց լավագույն դասախոսներից մեկին, հայրենասեր ու պարզապես հրաշալի մարդու,,:

,,Երբեք չեմ մոռանա մեր սիրելի պարոն Դավթյանի դասաժամերը, որոնք դասաժամ լինելուց բացի, կյանքի շատ կարևոր դասեր էին. մեզ՝ ուսանողներիս, միշտ խիզախելու էր կոչում և ամենակարևորը՝ պայքարել արդարության համար, որ կեղծիքի որոմը մոտ չգա որևէ մեկիս,,:

,, Բացառիկ մարդ ու դաստիարակ կորցրեց համալսարանը,,:

,,Ցավոք, մեզանից հեռացավ հազվագյուտ անկաշառ և ազնիվ մարդկանցից մեկը: Մարդ, ով կարողանում էր միաժամանակ լինել իսկական ուսուցիչ և իսկական ընկեր,,:

Ի լրումն այս ամենի՝ հավելում եմ, որ Յուրի Դավթյանը իր կյանքն ապրել է որպես օրինակելի ամուսին և ծնող, դաստիարակել է երեք զավակ՝ մեկ որդի և երկու դուստր, ովքեր, շարունակելով իրենց հոր գործը, կայացած աշխատողներ են կրթության ոլորտում: Անմնացորդ նվիրված էր իր կնոջն ու զավակներին, իր հինգ թոռներին:

Մեծարգո քաղաքապետ, խնդրանք-դիմումս երկարեց, որովհետև ցանկացա, որ Դուք լիարժեք պատկերացում կազմեք Յուրի Դավթյանի՝ հայ ազգի արժանավոր զավակի մասին, ով արժանի է հիշվելու ոչ միայն իր կատարած գործերով ու գրքերով, այլ նաև հուշատախտակով:

Կից ներկայացնում եմ նաև Յուրի Դավթյանի կենսագրությունը և հեղինակած գրքերը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքներով՝

Սիրանուշ Խլղաթյան

Հեռ. 093-41-62-34
091-41-62-34

,,07,, 10 ,, 2019թ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յուրի Ռուբենի Դավթյանը ծնվել է 1956թ. նոյեմբերի 21-ին, Երևան քաղաքում: 1963-73թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 24 միջն. դպրոցը: 1975-77թթ. անցել է բանակային ծառայություն: 1977թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1982թ. գերազանցության դիպլոմով: 1982թ. ընդունվել է բուհի ասպիրանտուրան: Մինչև 1986թ.եղել է հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ ժամանակակից հայոց լեզու մասնագիտությամբ: 1984-1989թթ. աշխատել է բուհի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար: 1990թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և անցել աշխատանքի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 1997-2002թթ. եղել է բուհի պրոռեկտոր: 2005թ. ստացել է դոցենտի գիտական կոչում՝ լեզվաբանություն մասնագիտությամբ: 2006թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2014թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում՝ լեզվաբանություն մասնագիտությամբ: 2011-2016թթ. եղել է ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկանը: 2016-2019թթ. շարունակել է դասախոսական աշխատանքը հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես պրոֆեսոր: 1994-2016թթ. պարբերաբար հրավիրվել է Երևանի Պետական համալսարան՝ դասախոսական աշխատանքի բանասիրական, արևելագիտության, միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում, մասնակցել է Պետհամալսարանի պետական ավարտական քննություններին որպես նախագահ:

Արժանացել է պետական պարգևների՝ Դրաստամատ Կանայան մեդալ, ՀՀ ԵԿՄ մեդալ, ՀՊՄՀ հոբելյանական մեդալներ:

Հրատարակել է 50-ից ավելի գրքեր և գիտական հոդվածներ, որից 2-ը մենագրություն, 32 հոդված, 16 գիտամեթոդական ձեռնարկ, որոնցից 5-ը ՀՀ ԿԳՆ կողմից ճանաչվել են որպես ուսումնօժանդակ ձեռնարկներ դպրոցների և բուհերի համար:

N	Անվանումը	Տպագիր կամ ձեռագրի իրավունքով	Հրատարակչություն, ամսագիր (անվանումը, համարը, տարեթիվը)	էջերի կամ մամուլների քանակը	Համահեղինակ
1.	Հայերենի կետադրության ինքնուսույց	տպագիր	,,Շուշան,,հրատ., 1995	75 էջ, 4,7 մամուլ	գիրք
2.	Ուղղագրության ուսուցման բառարանատիպ ձեռնարկ	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, հրատ.,Երևան, 2002	100էջ, 6,25 մամուլ	գիրք
3.	Լրագրային վերնագրերի լեզուն և ոճը	տպագիր	,,Հայոց լեզու և գրականություն,,, հ.1-2,Երևան, 2002	էջ 24-26	
4.	Լեզվի տեսություն, թե խոսքի մշակույթ	տպագիր	,,Հայոց լեզու և գրականություն,, , հ.3-4	էջ 55-60	
5.	Ժամանակակից հայերենի կետադրության ինքնուսույց	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, հրատ., Երևան, 2005	120 էջ, 7,5 մամուլ	գիրք
6.	Հայոց լեզու.փոխակերպումներ	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, , Երևան, 2005	60 էջ, 3,75մամուլ	գիրք
7.	Ժամանակակից արևելահայերենի ուղղագրության ինքնուսույց	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, հրատ.,Երևան, 2005	132 էջ, 8,25մ.	գիրք
8.	Նորագույն փոխառությունները մերօրյա մամուլում	տպագիր	,,Կանթեղ,,, հ.1/26/, Երևան, 2005	էջ 147-151	
9.	Բառը թերթերի էջերում	տպագիր	,,Նորք,, հրատ., հ.4, Երևան, 2005	էջ 127-135	
10	Մամուլի գործառույթները.նրանց լեզվական արտահայտություններ	տպագիր	,,Նոր-դար,, , հ.2, Երևան, 2005	էջ 132-135	
11	Նորակազմ բառերը մամուլի էջերում	տպագիր	,,Նոր-դար,, ,հ.2, Երևան, 2005	էջ 128-131	
12	Թեման և ռեման լրագրանյութերում և դրանց ուսուցումը ոճագիտության դասընթացում	տպագիր	,,Մանկավարժական միտք,, , հ.4, Երևան, 2005	էջ 64-73	
13	Բառիմաստի փոփոխությունները հետխորհրդահայ մամուլում	տպագիր	,,Կանթեղ,, , հ.2,Երևան, 2006		

140	Լրագրային ժանրերի լեզվառճական արտահայտություններ ը	տպագիր	Հեղինակային հրատ., Երևան, 2006	88 էջ	գիրք
15	Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում	տպագիր	Հեղինակային հրատ., 2006	232 էջ	գիրք
16	Դարձվածքները մամուլի էջերում	տպագիր	,,Նորք,, , հ.1/26/, Երևան, 2006	էջ 127-135	
17	Բայի հիմքերի ուսուցումը	տպագիր	,,Մանկավարժական միտք,, . Երևան, 2006	էջ 159-162	
18	Հայոց լեզու. Գծապատկերներ և աղյուսակներ	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, հրատ., Երևան, 2007	88 էջ	գիրք
19	Հայոց լեզու. թեստերի ժողովածու	տպագիր	,,Գրիգոր Տաթևացի,, , հրատ., Երևան, 2007	104 էջ, 6,5մամուլ	Ս.Խլղաթյան, գիրք
20,	,,Ես իմ անուշ Հայաստանի,, բանաստեղծության լեզուն	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 28.03.2007	էջ 5	
21	,,Մահվան տեսիլ,, բանաստեղծությունը	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 06.06.2007	էջ 22	
22	Համեմատությունների անզուգական վարպետ Չարենցը	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 15.08.2007 և 29.08.2007	էջ 5	
23	Հայոց լեզու. թեստերի ժողովածու.250 թեստ	տպագիր	,,ՀՏԻԳՀԻ,, ՓԲԸ, 2008	255 էջ	Ս.Խլղաթյան գիրք
24	Աշոտ Աբրահամյանի ,,Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը,,	տպագիր	ՀՊՄՀ ,,Հայագիտական հանդես,, , հ.2-3/8-9/ Երևան, 2008	էջ 58-64	
25	Նախադասության անդամների ուսուցման նոր եղանակ	տպագիր	,,Կրթությու,, շաբաթաթերթ, 20.01.2010		
26	Երկրորդական նախադասությունների բնույթի որոշումը	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 27.01.2010	էջ 11	
27	Անկանոն բայերը և նրանց ուսուցումը	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 10.02.2010	էջ 6	
28	Լեզվաբանությունը գիտությունների համակարգում	տպագիր	,,Նոր-դար,, , 2010, 1/2	էջ 30-39	
29	Русско-армянский	տպագիր	,,Лимуш,, , Ереван,	44 էջ	Асатрян

	краткий учебник словарь лингвистических терминов и терминологических сочетаний		2010		Р.Х.,Гюлмисарян С.А. գիրք
30.	Բարդ բառերը և նրանց ուսուցումը	տպագիր	,,Կրթություն,, շաբաթաթերթ, 03.11.2010	էջ 12-13	
31	Ժամանակակից հայերենի կետադրության ինքնուսույց	տպագիր	Երևան, 2010	120 էջ	գիրք
32	Հայոց լեզու, թեստերի ժողովածու / 400 թեստ/	տպագիր	,,Զանգակ-97,, , Երևան,2010	176 էջ	գիրք
33	Գրաբարյան իմաստափոխված բառերը ժամանակակից հայերենում	տպագիր	,,Կրթություն,, ,23.02.2011	էջ 10	
34	Գրականություն և լեզու	տպագիր	,,Կրթություն,, , 16.02.2011	էջ 5,6,7	
35	Բառակապակցություն	տպագիր	,,Կրթություն,, . 16.03.2011	էջ 9	
36	Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության	տպագիր	,,Կրթություն,, , 23.03.2011	էջ 8-13	
37	,,Անլռելի զանգակատուն պոեմի վերնագրերի մասին,, Պարույր Սևակի ,,Հայաստան,, բանաստեղծությունը	տպագիր	,,Կրթություն,, , 31.03.2011	էջ 8-11	
38	Համո Սահյանի բառի խորհուրդը	տպագիր	,,Կրթություն,, ,06.04.2011		
39	Ինձի կըսեն միշտ տխուր ես... Դուրյանի ,,Տրտունջքը,,	տպագիր	,,Կրթություն,, , 31.03.2011	էջ 9	
40	Մեր մեծերի գրական և խոհաիմաստասիրական ուղիով	տպագիր	,,Ծաղիկ,, Բեյրութ, 27.05.2010	էջ 4	
41	,,Նորից չեն սիրում, սիրում են կրկին,, Պարույր Սևակը հայերենի մեծ գիտակ	տպագիր	,,Կրթություն,, , 16.02.2011	էջ 6	
42	Բառային թելադրություն.2000բառ	տպագիր	2013	2 մամուլ	գիրք
43	Ժամանակակից հայերենի նախադասության	տպագիր	2013	2,5 մամուլ	գիրք

	վերլուծության ուղեցույց				
44	Հայերենի ուսուցման հարցեր /ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ /	տպագիր	Երևան, 2014	104 էջ, 6,5 մամուլ	Գիրք
45	Ճարտասանության ձեռնարկ	տպագիր	Երևան, 2014	114 էջ, 7,25 մամուլ	գիրք
46	Հայոց լեզու /ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ/	տպագիր	Երևան, 2014	184 էջ, 11.5 մամուլ	գիրք
47	Հայոց լեզու. փոխակերպումներ /ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ/	տպագիր	Երևան, 2014	67 էջ, 4.25 մամուլ	գիրք
48	Հայոց լեզու. գծապատկերներ և աղյուսակներ /ՀՀԿԳՆ կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ/	տպագիր	Երևան, 2015	88 էջ, 5.5 մամուլ	գիրք
49	Համո Սահյանի բառի խորհուրդը.,,Քարափը,,	տպագիր	Խ.Աբովյանի անվ.ՀՊՄՀ ,,Հայագիտական հանդես,, , Հավելված, Համո Սահյան-100, ,,Մանկավարժ,, հրատ.,Եր.,2015	էջ 7-9	
50	Նախադասության վերլուծություն և գծապատկերներ	տպագիր	Հեղինակային հրատ. Երևան,2015	72 էջ, 4.5 մամուլ	գիրք
51	Էսսեներ գրականության և լեզվի մասին	տպագիր	Հեղինակ.հրատ., Երևան, 2016	108 էջ, 7 մամուլ	գիրք
52	Ուղղագրության ձեռնարկ	տպագիր	Հեղինակ.հրատ., Երևան,2017	120 էջ, 7.5 մամուլ	գիրք
53	Հայ գրականության համառոտ տեղեկատու-ձեռնարկ	տպագիր	Հեղինակ.հրատ. , Երևան, 2017	230 էջ, 13.75 մամուլ	գիրք
54	Բարդ	տպագիր	Հեղինակ. Հրատ.,	40 էջ, 2.5	գիրք

	նախադասության գծապատկերներ		Երևան,2017	մամուլ	
55	Ճարտասանության ձեռնարկ	տպագիր	Հեղինակ.հրատ., Երևան, 2017	110 էջ, 7 մամուլ	գիրք
56	Հայոց լեզվի ուսուցման ուղեցույց	տպագիր	Հեղինակ.հրատ., Երևան, 2018	206 էջ, 12.9 մամուլ	գիրք
57	Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության սկզբունքները	տպագիր	Հեղինակ.հրատ., Երևան, 2019	65 էջ, 4.25 մամուլ	գիրք

Գիտական հետաքրքրությունների շրջանակը – Ժամանակակից հայոց լեզու /հնչունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ոճաբանություն/, ճարտասանություն, լեզվաբանություն:

Կարդացած դասընթացները.

Բակալավրիատում՝ ,,Ժամանակակից հայոց լեզու / հնչյունաբանություն, բառագիտություն /,, , ,,Ոճաբանություն,, , ,,Խոսքի մշակույթի հիմունքներ,,:

Մագիստրատուրայում՝ ,,Իմաստաբանության հարցեր,, , ,,Ճարտասանություն,, , ,,Մամուլի լեզու,,:


600 mm
424 mm
150 mm
600 mm
700 mm
300 mm
ԱՅՍ ՏԱՆԸ
1991-2019թթ.
ԼՈՒՐԵԼ Է ԱՆՎԱՆԻ ԼԵՋՎԱԲԱՆ,
ԳԻԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ՅՈՒՐԻ ԼՈՒԲԵՆԻ ԳԻՎԹՅԱՆԸ

ԱՅՍ ՏԱՂԸ

1991-2019թթ.

ԱՊՐԵԼ Է ԱՂՎԱՆԻ ԼԵՌԱՎԱՅՐՈՒՄ,

ՀԻՊՏԱԼ, ՊՐՈՖԵՍՈՐ

ՅՈՒՐԻ ԻՍՐԱԵԼԻ ՀԻՎԹՅԱՆԸ

«ԼԻԼԻԹ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 13
Հեռ՝ 010 46 34 55

24 11 2022թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է՝ Սիրուշեցոյ Դավթի Գեղարքունիքից - Սեզ 1967թ.
առ այն, որ նա բնակվում է՝ գ. Լճաշենի փողոց 1 շենքի թիվ 11 բնակարանում: Անշարժոնը - հանգուցյալ մայրի Ռաբերտի Դավթյանը 1991 թվականից մինչև մահ՝ 14.05.2019 թվականը բնակվել է վերը նշված հասցեում:

Տրվում է նախկին գրասենյակի՝ Գլուխ ուսումնասիրությունների

Համատիրության նախագահ՝ Լ. Սարգսյան

«ԼԻԼԻԹ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
"ЛИЛИТ" ТОВАРИЩЕСТВО СОБСТВЕННИКОВ ЖИЛЬЯ ЕРЕВАН ЭЧМИАДЗИНСКАЯ 13
02243617

Երևանի քաղաքապետ

պարոն Հ. Սարգսյանին

Սիրանուշ Խլղաթյանից

/հասցե՝ Երևան, Նժդեհի 1, բն.11,

հեռ. 091416234/

Դիմում

Ի լրումն 07/10/2019թ. իմ դիմումի՝ տեղեկացնում եմ, որ ամուսնուս՝ Յուրի Ռուբենի Դավթյանի հուշատախտակը տեղադրելու ծախսերը հոգալու է ընտանիքը:

Դիմող՝ /Ս.Խլղաթյան/